

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ա. Մովսիսյան**

16 փետրվար 2011 թ. N 09-Ա

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 42-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-
ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ԴՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ ընդերքօգտագործողներն իրավունք ունեն օգտագործել սեփական լեռնահանքային և դրա հետ կապված վերամշակող արտադրությունների թափոնները, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Նշված դրույթի տառացի մեկնաբանությունից բխում է, որ ընդերքօգտագործողի կողմից օրենքով սահմանված կարգով իրականացված ընդերքօգտագործման արդյունքում ստացված արտադրական թափոնները (լցակույտերը), իրավական առումով չեն կարող տեխնաձին հանք դիտարկվել և ընդերքօգտագործողի կողմից, որի գործունեության արդյունքում առաջացել են այդ թափոնները, դրանց շահագործման համար լրացուցիչ թույլտվություն (լիցենզիա) չի պահանջվում, այլ նման թափոնների վերամշակումը, այլ օրենսդրության դրույթների պահպանման պայմանով, ընդերքօգտագործողի կողմից կարող է իրականացվել ազատորեն՝ վճարելով միայն այն օգտակար հանածոների բնօգտագործման վճարները (ռոյալթիները), որոնց համար ընդերքօգտագործողը դեռևս չի վճարել: